ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ցուցահանդեսի տարածքի վարձակալության և կազմակերպման այլ ծառայությունների

ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *ԲԱՀ-ԳՀԾՁԲ-18/11-3*

ք. Երևան «17» հոկտեմբերի 2018 թ.

Բիզնես Արմենիա Հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Ա. Ավակ Ավակյանի , որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Մերիդիան Հոլդինգ ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Մանուկյանի, որը գործում է ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է *ցուցահանդեսի տարածքի վարձակալության և կազմակերպման այլ* ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 23940000(_քսաներեք միլիոն ինը հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն

իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Բիզնես Արմենիա Հիմնադրամ	Մերիդիան Հոլդինգ ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, Ոսկերիչների 1
Հ/հ՝ 1930040359220100	Հ/հ՝1510038345540100
Կոնվերս Բանկ ՓԲԸ	Արարատբանկ ԲԲԸ
ՀՎՀՀ՝ 02634631	ՀՎՀՀ՝ 02621409
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«17» 10 2018 թ. կնքված
ԲԱՀ-ԳՀԾՁԲ-18/11-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	70311200/2	• Ներկայացվում է ստորև	Դրամ	18000000	1	Ք. Երևան	20.10.2018-26.10.2018
2	79951100	* Ներկայացվում է ստորև	Դրամ	5940000	1	Ք. Երևան	20.10.2018-26.10.2018

*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
Չափաբաժին 1

«Եվրասիական շաբաթ» Միջազգային համաժողովի անցկացման նպատակով Ցուցահանդեսի տարածքի վարձակալության ծառայություններ
Ձեռք բերվող ծառայության նկարագիրը
Պատվիրատու՝ Բիզնես Արմենիա Հիմնադրամ Վայրը՝ Ք, Երևան, Կենտրոն կամ Կենտրոնին հարակից տարածք Կատարողի կողմից ծառայությունը մատուցվում է ըստ մոնտաժի, միջոցառման անցկացման եւ ապամոնտաժի կատարման ժամկետների: Միջոցառման անցկացման ժամկետներ՝ 22 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 06:00-ից մինչեւ ժամը 21:00, 23 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 06:00-ից մինչեւ 21:00, 24 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 06:00 մինչեւ 21:00: Մոնտաժի ժամկետներ՝ 20 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 8:00-ից մինչեւ 21 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 00:00, 21 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 00:00 մինչեւ 22 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 00:00, 22 հոկտեմբերի 2018 թ. ժամը 00:00 մինչեւ 06:00: Ապամոնտաժի ժամկետներ՝ 24 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 18:00-ից մինչեւ 25 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 00:00, 25 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 00:00 մինչեւ 26 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 00:00:

«Եվրասիական շաբաթ» միջազգային համաժողովի տարածքին ներկայացվող պահանջներ

1. Լիագումար նիստերի դահլիճ՝ շարքային դասավորվածությամբ (рассадка театром)՝ առնվազն 800 մարդու համար նախատեսված, նիստի նախագահող կազմի համար տարածք՝ առնվազն 8 մարդու համար նախատեսված (президиум на 8 чел),
2. Գործնական ծրագրերի անցկացման համար դահլիճ՝ շարքային դասավորվածությամբ (рассадка театром)՝ նախատեսված առնվազն 150 մարդու համար, նիստի նախագահող կազմի համար տարածք՝ առնվազն 8 մարդու համար նախատեսված (президиум на 8 чел),
3. Գործնական ծրագրերի անցկացման համար դահլիճ՝ շարքային դասավորվածությամբ (рассадка театром)՝ նախատեսված առնվազն 150 մարդու համար, նիստի նախագահող կազմի համար տարածք՝ առնվազն 8 մարդու համար նախատեսված (президиум на 8 чел),
4. Գործնական ծրագերի անցկացման համար նախատեսված դահլիճ՝ կլոր սեղանի դասավորվածությամբ՝ (рассадка круглый стол) նախատեսված 25 մարդու համար, շուրջը դասավորվածությամբ նախատեսված 80 մարդու համար (рассадка вокруг),
5. Գործնական ծրագրերի անցկացման համար նախատեսված դահլիճ՝ շարքային դասավորվածությամբ (рассадка театром)՝ նախատեսված առնվազն 100 մարդու համար,
6. Ցուցահանդեսային տարածք առնվազն 3 600 քմ,
7. B2B հանդիպումների համար նախատեսված տարածք՝ առնվազն 900 քմ,
8. Մամուլի կենտրոն՝ 50 աշխատողի համար նախատեսված, ինչպես նաև ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար նախատեսված սննդի վայր,
9. Հանգստի համար նախատեսված տարածք առնվազն 500 քմ,
10. Խոսնակների համար նախատեսված տարածք առնվազն 350 քմ,
11. VIP հյուրերի համար նախատեսված տարածք առնվազն 100 քմ,
12. Բանակցությունների համար նախատեսված սենյակ ՝ 20-40 մարդու համար՝ կլոր սեղանի դասավորվածությամբ (рассадка круглый стол),
13. Անհատական գրասենյակներ առնվազն 40 քմ, 5 հատ,
14. Գրանցման համար տարածք՝ 10 աշխատողի համար նախատեսված,
15. Սուրճի ընդմիջման համար նախատեսված տարածք առնվազն 900 քմ,
16. Քեյթերինգային ծառայությունների համար նախատեսված տարածք,
17. Կազմկոմիտեի համար սենյակ առնվազն 100 քմ,
18. Տեխնիկական տնօրինության համար նախատեսված սենյակ առնվազն 100 քմ,
19. Անձնակազմի համար նախատեսված տարածք՝ առնվազն 80 քմ,
20. Պահեստի համար նախատեսված տարածք առնվազն 120 քմ:

2. Կատարողը պարտավորվում է ապահովել անձնակազմի, մասնակիցների մուտքը, ինչպես նաեւ նյութերի, սարքավորումների, կահույքի առաքումը տարածք, շենք, դահլիճներ, տաղավարներ 2018 թվականի հոկտեմբերի 20-ից ժամը՝ 08:00-ից մինչեւ 2018 թվականի հոկտեմբերի 26 ժամը՝ 00:00-ն ընկած ժամանակահատվածը՝ ըստ մոնտաժի, միջոցառման անցկացման եւ ապամոնտաժի կատարման ժամկետների,այդ թվում նաև Համաժողովի կազմակերպմանն ու անցկացմանը ներգրավված երրորդ կազմակերպությունների համար:

	Գրանցման համար բարձր սեղաններ (Стойки регистрации) նախատեսված 10 աշխատողի համար	առնվազն 3	Հատ
	VIP բանակցությունների համար սեղաններ (նախատեսված 15 անձի համար)	առնվազն 3	Հատ
	Կախիչներ (рейл) ուսերով	առնվազն 4	Հատ

Ծառայությունների ապահովում

Մաքրում	Ամենօրյա մաքրում եւ աղբահանություն՝ մոնտաժման օրերին (2 օր), մոնտաժից հետո ընդհանուր մաքրում,միջոցառման անցկացման ընթացքում տարածքի եռօրյա ընթացիկ մաքրման աշխատանքներ, ապամոնտաժից հետո տարածքի մաքրում եւ աղբանահանություն
Անվտանգություն	Անվտանգության ապահովում գիշերային ժամերին՝ մոնտաժի ժամանակ (2 օր), միջոցառման անցկացման ժամանակ (3 օր), ցերեկային ժամերին (ժամը՝ 8:00-ից մինչեւ ժամը՝ 18:00) – 8 անձ միջոցառման անցկացման ընթացքում (3 օր):
Էլեկտրականության միացում	1) Էլեկտրականության ապահովում բոլոր տարածքներում, դահլիճներում եւ այլ գործող տարածքներում՝ ըստ էլեկտրականության միացման սխեմայի (լրացուցիչ կտրամադրվի) հոկտեմբերի 20-25-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում: 2) Էլեկտրականության ապահովման նպատակով սպասարկող անձնակազմի աշխատանք՝ հոկտեմբերի 20-25-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում:
Համացանց	1) Անլար համացանցի ապահովում, եւ կաբելային համացանցի ապահովում տնօրինության, կազմկոմիտեի և VIP աշխատասենյակներում ՝ մոնտաժի ժամանակ (2 օր), միջոցառման անցկացման ժամանակ (3 օր), ապամոնտաժի ժամանակ (1 օր)՝ ըստ տեղակայման սխեմաների: 2) Սպասարկող անձնակազմ՝ տնօրինության, կազմկոմիտեի և VIP աշխատասենյակներում, Wi-fi եւ կաբելային ինտերնետի ապահովման նպատակով:

Ծառայության կատարման ժամկետը/վերջնաժամկետը/	
Սկիզբը	Ավարտը
20.10.2018թ.	26.10.2018թ.

Չափաբաժին 2

«Եվրասիական շաբաթ» Միջազգային համաժողովի անցկացման նպատակով ցուցահանդեսի կազմակերպման հետ կապված այլ ծառայություններ / միջոցառումների հետ կապված ծառայություններ/
Ձեռք բերվող ծառայության նկարագիրը

Պատվիրատու՝ Բիզնես Արմենիա Հիմնադրամ
Վայրը՝ Ք, Երևան, Կենտրոն կամ Կենտրոնին հարակից տարածք
Կատարողի կողմից ծառայությունը մատուցվում է Ծառայությունների մատուցման ցանկին համապատասխան՝ ըստ մոնտաժի, միջոցառման անցկացման եւ ապամոնտաժի կատարման ժամկետների:

Միջոցառման անցկացման ժամկետներ՝
22 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 06:00-ից մինչեւ ժամը 21:00,
23 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 06:00-ից մինչեւ 21:00,
24 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 06:00 մինչեւ 21:00:

Մոնտաժի ժամկետներ՝
20 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 8:00-ից մինչեւ 21 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 00:00,
21 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 00:00 մինչեւ 22 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 00:00,
22 հոկտեմբերի 2018 թ. ժամը 00:00 մինչեւ 06:00:

Ապամոնտաժի ժամկետներ՝
24 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 18:00-ից մինչեւ 25 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 00:00,
25 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 00:00 մինչեւ 26 հոկտեմբերի 2018 թ. ժամը՝ 00:00:

Ծառայությունների մատուցման ցանկ
Կահավորում

Տարածքի կահույք	Սեղան-գրասեղան (Стол-парта)	առնվազն 120	հատ
	Աթոռներ	առնվազն 1500	Հատ

Կայանատեղի	Կայանատեղիների առկայություն VIP մասնակիցների, անձնակազմի, ՁԼՄ-ների եւ ավտոբուսների համար՝ մոնտաժի ժամանակ (2 օր), միջոցառման անցկացման ժամանակ (3 օր), ապամոնտաժի ժամանակ (1 օր):

Ծառայության կատարման ժամկետը/վերջնաժամկետը/	
Սկիզբը	Ավարտը
20.10.2018թ.	26.10.2018թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Բիզնես Արմենիա Հիմնադրամ	Մերիդիան Հոլդինգ ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, Ոսկերիչների 1
Հ/հ՝ 1930040359220100	Հ/հ՝1510038345540100
Կոնվերս Բանկ ՓԲԸ	Արարատբանկ ԲԲԸ
ՀՎՀՀ՝ 02634631	ՀՎՀՀ՝ 02621409
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
«17» 10 2018 թ. կնքված
ԲԱՀ-ԳՀԾՁԲ-18/11-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	70311200/2	Ցուցահանդեսի տարածքի վարձակալության ծառայություններ										18000000	18000000	18000000	18000000
2	79951100	միջոցառումների հետ կապված ծառայություններ/ցուցահանդեսի կազմակերպման հետ կապված այլ ծառայություններ										5940000	5940000	5940000	5940000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Բիզնես Արմենիա Հիմնադրամ	Մերիդիան Հոլդինգ ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, Ոսկերիչների 1
Հ/հ՝ 1930040359220100	Հ/հ՝1510038345540100
Կոնվերս Բանկ ՓԲԸ	Արարատբանկ ԲԲԸ
ՀՎՀՀ՝ 02634631	ՀՎՀՀ՝ 02621409
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն